

ՊԱՏՄԱԿԱՆ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ք .

Հետագայ յիշատակարանքը կալիա-
թայէն խրկուած են եւ խնդրած ամա-
գրոյս միջոցաւ հրատարակել :

Մի ձեռագիր Աւետարանէն ընդօրի-
նակուած են , թէ եւ ուշագրութեան
արժանի եւ կարեւոր տեղեկութիւնք
աւելի չկան :

« Փառք ամենայն սուրբ *) Արրորդու-
թեան շաւր եւ Որդոյ եւ շողոյն սրբոյ (.) արդ
ես Խաւջայ շաղար բէկս որդի Սարգիսի եւ
Մուղամի . առի սուրբ Աւետարանս հա-
լալ եւ ի քրտնաջան վաստակոց իմոց եւ
իմացայ զունայնութիւն եւ ստութիւն եւ
աշխարհիս կենցաղս եւ ի միտ առի զառակ
Իմաստնոյն որ ասէր , երանի որ ունիցի զա-
ւակ ի սիօն կամ ընտանի Արուսաղէմի .
նոյնգունակ ես տառապեալ ողիս Խաւջայ
շաղար բէկս առի սուրբ աւետարանս պա-
շար երկրնայձիգ ձանապարհին , եւ լուսա-
տու շառաւիղ պայծառ ինձ ի կեանս . եւ
ինքն Տէրն մեր Յիսուս Վրիստոս որ ընդու-
նող է մեղաւորաց , եւ գտից (գտիչ) կորոյսե-
լոց եւ ընդունող է ամենայն նուիրողաց , ըն-
դուն . . . շաղար բէկն , եւ ընկալցի ի ձեռաց
նորա , սուրբ աւետարանս որպէս խոյն Աբ-
րահամու , եւ որպէս իւղ սուրբ ի ձեռաց
պրոնիկին , եւ որպէս զերկու լոմայն ի ձեռաց
այրոյն . նոյն աստուածային մարդասիրու-
թեամբն ողորմութեամբն եւ զթութեամբն

ողորմեացէ , եւ զթասցէ ի բարի ծառայն իւր ,
Խաւջայ շաղար բէկն եւ թողցէ , զամենայն
յանցանս եւ բարի ճնաւղաց նորա , Խաւ-
ջայ Սարգիսին , եւ Մուղամին , եւ եղբարցն
իմոց Աւաչիկին , եւ Մահրատի Տամբու-
ղին , եւ կողակցի իմոց Աաշխունին եւ որ-
դոյն իմոց Միրբարին , Ամիրվալթին , եւ
եղբարորդոցն իմ Խաւջայ Մարուղին ,
Խաջանորէ եւ Ասամբուղինս եւ քուերացն
իմ Աաղամսութլուէ , եւ որդոյն մահրատի
Վաղուբաթին , եւ ամենայն արեան
մերձաւորացն կենդանացն եւ հանգուցելոցն
առ հասարակ եւ այլ ամենայն ազգակա-
նաց նորա . արդ ես Խաւջայ շաղար բէկս
գնցի սուրբ աւետարանս , Աղիշայ եպիս-
կոսոսէն , Ի Ռ զեկան , իմ սրտի յաւ-
ժարութեամբ , ծախեցի սուրբ աւետարա-
նքս , որում դաւէ չկայ , ոչ եղբաւր , ոչ
քուէր , ով որ դաւէ անէ (.) Աղիշայ Ապիս-
կոսոսին անէ . Տէր Սարգիս կաթուղեկո-
սին վկայութեամբն . Տէր Աբրահամ վար-
դասեալին վկայութեամբն . լուսիս Խա-
ջասուրի վկայութեամբն . Խաւջա Չա-
րուխին վկայութեամբն . Տէր Մաթէոսին
վկայութեամբն . Տէր Պիրգորին վկայու-
թեամբն եւ Տէր Աղիշայ եպիսկոսոս իմ
սրտի յաւժարութեամբ ծախեցի . Խաւ-
ջայ շաղար բէկն Աստուած շնաւոր *) անէ
իւրանն . Թ . Տ . Օ . Գ . :

Վրիստոս Աստուած մեր եւ կոչեացէ
Խաւջայ շաղար բէկն , յանուանէ եւ զժը-
նողս իւր , թէ եկայք աւրհնեալք շաւր
իմոյ ժառանգեցէք զանսպառ ուրախու-
թիւն ամէն : Այլ եւ կենարար ցաւղի
Վրիստոսի ցաւղեցի յոսկերս նոցա եւ

(*) Աւետարան :

(*) Շնորհաւոր :

բուսուսցէ յաւրն վերջին, այլ և Խաչի լուսոյն, երանաւէտ ձայնին, Աստուծոյ տեսոյն, լուսեղէն խորանին, եաւթնաստեղեան յարկին, ամենառատ սեղանին, անմահական բաժակին, հաշտարար պատարազին, անթառամ պսակին, զասակից հաւասարակից արասցէ Վրիստոս Աստուած Խաւջայ հազար բէկն և զամենայն ննջեցեալսն իւր, ամէն:

Եւ են տանապեալ ողոյս Առաքեալ արեղէ պրող սորայ յիշման արժանի անէք և Աստուած զձեզ յիշէ իւր արքայութիւն ամէն. Հայր մեր որ սուրբ:

(Մինչև ցաստ է յիշատակարան որ ի սկիզբն աւետարանին է: Իսկ աստի մինչև

յվերջն՝ զրեալ է ի վերջն աւետարանի ձեռամբ զրջի աւետարանին):

* Աւետարան ըստ Յովհաննու: Չըլուկք ՄԼԿ:

Եւ Տէր Յիսուս Վրիստոս որ կնոջն մեղուցելոյ շնորհեցեր զյանցանս նորա և ոչ զատապարտեցեր: Եւ շնորհեալ և մեղուցեալ ծառայի քո Եմուտնի զյանցանքս նորա, և մի դատապարտեր զնա յորժամ դաս փառաւք հայրենի, զի արժանասցէ շնորհիւ քո աւրհնել զքեզ ընդ հաւր և ընդ հոգոյղ սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

- Շնորհաւք Երարչին էիցս, տիրական տառս յանկեցաւ:
- Մատամբ մեղուցեալ անձին, որ Եմուտն անուն կոչեցաւ:
- Եյս քառավըռակ աղբիւրս, որ յանհուն ծովէն հոսեցաւ:
- Որով զմայլեալ սնու բանական, բերկրեալ խրախացաւ:
- Նստեալ ի զահոյս մեծաբքունական, հրճուեալ պանծացաւ:
- Ի զարմից խնդրեմ՝ նորոյս սիրովնի, որ առ ձեզ զետքս այս հոսեցաւ:
- Էթէ հանդիպիք սմին տեսութեան կամ՝ զաղափարաւ:
- Եւ Տէր պաղատիք վասն իմ, որ սովաւ ձեզ հայր կոչեցաւ:
- ԴԻ ի քոյս վերատին զառնալ ի յաղին, ուստ վարատեցաւ:
- Երզել հոգևոր նուագ որ Յիսուսի որդիացաւ:
- Տաւնել հրճուանօք ընդ ձեզ, ի տան Տեսուն որ հաստատեցաւ:
- Եհ թէ հանդիպէր բայիս (բանիս) կատարումն, որ զճաղրեցաւ:
- Բախեալ հրճուանայր անձն իմ փրկութեամբն որ պարգևեցաւ:
- Երդ աւրհեալ է Հայր Աստուած, որ սիրով ի մեզ զթացաւ:
- Նոյն և բարերար որդին, որ Փրկիչ մեզ երևեցաւ:
- Սրտիւ զոհութիւն Հոգւոյն, որ կրկին ջրով զմեզ ծնաւ:
- Անդերձ լուսեղէն ողեցոյց, եաւթնարփի փառաւք փայլեցաւ:
- Յերկինս ճանապարհորդեաց ընդ որ քարոզն մեր ընթացաւ:
- Ահրս բերկրեցաւ մարդկան, տեսութեամբն որում ցանկացաւ: »

« Փառք ամենասուրբ Արքայապետութեանն, եռակի անձնաւորութեանն, և եզակի տէրութեանն Հաւր և Արդոյ և Հողոյն սրբոյ: Ար եւ զօրութիւն տկարութեան իմոյ հասանել ի վերջին զիճ Աստուածային տառիս: Ի թվաբերութեան Աստուածային ազնւա ՉԻՒԱ: Ի հայրապետութեան Հայոց Տեառն Ատեփաննոսի: Աւ և ի թագաւորութեանն Ալիլիկեցոց և Հայոց Հեթմոյ, որդւոյ Աւետի, Վրիստոսասիբի և բարեպաշտի: Աւ և յիշխանութեան մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապարին և Խաչոյ, որդւոյ և թոռին մեծին Պառչայ, ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին Խախրականց: Օր պահեցէ զնոսա Տէր Յիսուս Վրիստոս յայսրմ՝ կենցաղումս ամրածածուկ աջովն իւրով ի մէջ այլասեռից ազանց՝ իբրև աբձան անդրդուելի ի մէջ ծովու, մինչև ի խորին ճերութիւն: Աւ յաստեացս փոխմանն անբսպառ ուրախութեանցն, և երկնից արքայութեանն արժանի արասցէ: Աւ եղև կատարումս սուրբ աւետարանիս՝ յայսրմ բազմավրդով և զաժան ժամանակիս, զի լուծ անողորմ և խիստ պահանջողաց էին ծանրացեալ ի վերայ մեր, ոչ ունելով թագաւոր և առաջնորդ քրիստոսապաւան այլ մանաւանդ քրիստոսատեացք, և ծարաւի արեանց երկրպագուացն Վրիստոսի: Այլ և ներող զօրութիւնն Աստուծոյ պահեաց սակաւ իշխանս յազգէս մերմ, արիք և քաջք ի պատերազմունս և նոքաւք նուաջեր զազս Հայոց: Յորոց մի էր ի նոցանէ մեծ սպարապետ տանն Աւագին, որդւոյ Իւանէ մեծ Աթաբակին, որ կոչէր անուն նորա Ամիրհասան, որդի մեծին Պառչա թագաւորք իշխանին: Աւ իբ-

րև նորին զօրութեամբն զոր Հնորհնայ էր նմն Աստուած (՝) սակաւ մի հովանացեալ էաք ընդ սաղարթ իշխանութեամբ նորա՝ եհաս ի վերայ մեր պատուհաս յԱստուծոյ, և բարենշանն մեր Ամիրհասան՝ կոչեցաւ ի կոչողէն ընդ հասարակաց բնութեանս մերոյ ճանապարհ: Աւ եթող կոծ մեծ աշխարհիս մերոյ և զօրաց իւրոց: Այն որ ի բազում պատերազմունս արխարար հանդիսանայր, և քաջապէս զթշնամիք Խաչին Վրիստոսի դիաթաւալ յերկիր կործանէր, և քաջ անուն անձին և ազգին ժառանգէր, և պարզևս և պատիւս ի թագաւորացն ընդունէր յազգէն՝ Անտողաց, որ բռնացեալ ունէին զաշխարհս բազումս, տիրեալ ծովէ ի ծով: Արոյ յորջորջէր անուանք նոցա՝ Հուլայու, և որդւոյ նորին՝ Ապաղա: Այնպէս սիրեցեալ էր ի նոցանէ վասն արիական քաջութեան և խոհեմութեան իւրոյ, մինչև զինակիր և յառաջադէմ լեալ յամենայն զործս արքունի: Աւ յանձնէ իւրեանց բազում անգամ զարդարեցին զնա ոսկեհուռ դիպակաւք և կամար ոսկեղէն ընդելուզեալ ակամբք և մարգարտօք կապեալ ի մէջս նորա և այնպէս շքեղութեամբ ճոխացուցանէին զնա: Աւ նա յառաջանայր աւրբատօրէ ի զործ քաջութեան, և յամենայն պատերազմունս անուանի լեալ ի համադասն, մինչև լուր համբաւոյ նորա տարածեցաւ ընդ աշխարհս բազումս: Ար և եհաս մինչև յաշխարհս Հոռովմայեցոց և Յունաց: Այլ և զգեղեցիկ հասակ նորա և զանհամեմատ տիպ պատկերի նորա՝ ոչ կարեմ ընդ գրով արկանել: Ասե զբարբառ բերանոյ նորա և զկորովութիւն բանից նորա՝ ոչ բաւեմ պատմել, զի լի էր

աստուածաստուր շնորհաւք: Աւ մինչ
 հրձուէաք բերկրանաւք որք էաք ընդ իշ-
 խանութեամբ նորա, խրատեաց զմեզ Աս-
 տուած, և մինչ չև էր հասեալ ի հասակ
 ձերութեան՝ փոխեաց զնա յաստեացս բա-
 րի խոստովանութեամբ, և եթող զմեզ
 որք: Օ, որ Տէր Աստուած փոխանակ այ-
 սրմ՝ կենցաղոյս՝ զանփախջան կեանսն և
 զանսպառ ուրախութիւնն շնորհեցէ նը-
 մա: Աւ զպակասութիւն ժամանակի նորա
 տացէ որդւոյ նորին Աշոց, և եղբօր նորա
 Պապաքին, և պահեցէ յամերամ՝ ժա-
 մանակս մինչև ի խորին ձերութիւն: Աւ
 մինչդեռ յայսմ արտմութեան վարանեալ
 կայաք՝ և հաս ի վերայ մեր և ս վեհագոյն
 սուգ հաւատոյ մինչև արար մոռացումն
 սզոյ առաջնոյն: Օ, ի զհոշակելի զգեակն որ
 կոչի Հոռոմայական կլա, որ էր ի վաշուց
 հետէ կարգեալ Աթոռ և տեղի ապաստանի
 Հայրապետացն Հայոց, վասն բազմու-
 թեան մեղաց մերոց՝ մասնեալ եղև թա-
 դաւորին Ազիպտացւոց: Աւ իբրև արիւ-
 նախանձ գազան յարձակեցաւ ի վերայ
 հաւատին Վրխատոսի: Աւ զամենեսեան
 յառնէ մինչև ցկին և ի ձերէ մինչև ցերի-
 տասարդ առ հասարակ՝ յապականու-
 թիւն և ի խողխողումն սրոյ մասնեցին:
 Աւ զսրբանեալ Հայրապետ մեր Ստե-
 փաննոս հանդերձ սրբազանիւքն քահա-
 նայեալք և սարկաւազօք, զպրաւք և կը-
 զերկիտօք ի զերութիւն վարեցին: Աւ
 գապաք սրբութեանն արարին խրախան
 հարձից և մանկանց իւրեանց: Օ, որ Տէր
 Աստուած հատուցէ նմա փոխարէն, և
 ինքն լինի վրէժխնդիր ծառայից իւրոց:
 Աոցէ զիշխանութիւն նորա և տացէ ազ-
 գաց բրիստոնէից, զի մի վքացեալ խրոխ-

տասցէ ի վերայ եկեղեցոյն Աստուծոյ: Վա-
 րիխօսութեամբ սրբուհոյ Աստու սծածնին,
 և ամենայն սրբոց եղեցի՛ եղեցի:
 Յայսմ դառն և տաժան ժամանակիս
 եղև զրաւ լուսածէմ տառիս: Երդ ոյ՛
 մանկունք նոր սիովնի՛ մի՛ անյուսութեամբ
 վարանիք, այլ յուսով ձգնեցարուք, և
 աւուրն ուրախութեան ակն կայջիս: Օ, ի
 եմք որպէս ծննդական, և ժամանակ է եր-
 կանց, և ճշեցեմք առ ցաւն: Աւ յորժամ
 ծնանիցեմք զհոգի փրկութեան՝ ոչ և ս
 կործանիցեմք, կործանեցին անօրէնք երկ-
 րի: Յայնժամ յարիցեմք մեռեալքս ի
 ծառայութենէ նոցա և ի գերեզմանէ նե-
 ղութեան: Ասան զի ցաւը ողորմութեան
 բժշկեցէ զմեզ, բայց երկիրն ամբարշտաց
 սատակեցի ըստ մարգարէին բանի: Այլ
 զի Փողն Տարսոնացի այսպէս դոչէ ասելով,
 յուսով ցնձացէք, տեառն ծառայեցէք,
 աղաւթից սեւեւ կացէք, զի ժամանակ ծա-
 ռայութեան մերոյ կատարեցի: Վանդի
 մերձեալ է օր փրկութեան մերոյ, զի ար-
 ժանի եղեցուք տեսանել զդերոդսն տաժա-
 րի Աստուծոյ մերոյ՝ գերեալք ի մնջ: Աւ
 ի միասին հրձուանաւք փառաւորեցուք
 զՎրիտոս որ վրէժխնդիր լինի ծառայից
 իւրոց, որ է օրհնեալ յաւիտեան: Աւ
 զրեցաւ տառս աստուածային ի զաւառիս
 Շահապունետոյ, ի միաստանիս որ է մերձ
 յամենաւրհնեալ և յաստուածապահ
 զեաւղս Ոճոպի կոչեցեալ, ընդ հովանեա-
 սոսկալի և սխրագործ նշանացս, խոտակե-
 րաց և խիկարաց: Աւ սրբոյ տաժարիս
 մաւրս լուսոյ սրբոյ Աստուածածնիս, և
 այլ հանուրց սրբոցս: Չեռամք յոգնա-
 մեղ և փցուն զբշաւորի Շմաւոնի, առ ի
 յիշատակ ինձ և ծնողաց և եղբարց իմոց

(և ինչ **Մատթէոս քահանայիս** որ զաւեանարանս գնեցի **ԳՄ** ղեկան) (*) ի խրախուժիւն և ի հրձուսն մանկանց սորա: **Եւ** ըստ կարի իմուժ զարդարեցի ռսկով և արծաթով, ոսկեգիծ զրուստով և ճարկերանգ զօվնով, և պաճուճեցի ներքոյ և արտաքոյ, ընտելուղեալ քարտմբք պատուականաւք և լուսափայլ մարգարտօք՝ ըստ աղքութեան **) իմուժ: **Երդ** աղերսիւ ժտեմ ո՞վ զասք լուսերամից՝ զիմօք մածեալ յերկիր հուպ առ դարչապարս՝ ձեր, որք հանդիպիք վերձանութեան սորա և կամ զաղափարի՝ սղախանաց սորա և թէ իցէ անարհեստ ինչ, սիրով հոգւոյն ուղղեմք և անմեղաղիր լինիցիք, զի այդչափ կարն իմուժ նուստութեան: **Օ** ի կարի յոյժ վշտացեալ էի հոգւով և ցաւազնտանձամբ երկու կողմամբ, հոգւով ասեմ և մարմնով: **Եւ** ի յոյով ամս թէ կարացի հանել յանկ, առաւել քան զմտասան ամ վասն չքաւորութեան իմոյ որ ոչ կարէի պատրաստել զնիւթ սորա, ոչ՝ զօք ունելով աւգնական: **Յորժամ** հանդիպիք սմին՝ յիշեմք ի **Վերիստոս** զճնոզն իմ, զԵւանի և զՇահրազան և զհարազան իմ զԱվաննէս, որ ի ձեռն սրոյ ելաւ յաշխարհէս յազգէն **Նետողաց**: **Օ** որ **Տէր Յիսուս Վերիստոս** բարեխօսութեամբ ամենայն սրբոց խառնեցէ զարիւն նորա ընդ արեան մարտիրոսացն և թողցէ զամենայն յանցանս նորա: **Նաև** զորդեակն հոգւոք զԱվհաննէս սարկաւազ, սրբոց սարկաւա-

(*) Եւ մէջ փակագծից եղեալ պարբերութիւնն զորք է յետին ժամանակի, զի անմասն է զրիւն՝ զրչն յիշառակսրամիւս:

(**) Գուցէ աղապատմութիւնն:

զացն նմանակակից և պսակակից արտայլ: **Եւ** լե զեղբարն իմ և զքոյրսն և զամենայն արեան մերձաւորսն յիշման արժանի առնիջիք: **Նաև** զղասս եղբայրութեան այսրմ՝ անապատի զառաջնորդ սորա և զփակակալ, զճերսն և զմանկունն և զմխարանեալսն յայտմ՝ քաւարանի՝ մի ձանձրանայք ասելով, **Տէր Յիսուս Վերիստոս** ողորմեա զըշաւորի սորա **Շմաւոնի**, և ամենայն վերազրելոց ի սմա, և ամենայն աւգնականաց սորա: **Եւ** թող նոցա զսղախանս նոցա, միջնորդութեամբ մարմնոյ և արեան քո անարիւն զնմանն, և այսմ լուսաւոր և աստուածախօս աւետարանիս: **Օ** ի ամենեքեան առ հասարակ արժանացեալ փառաւորեմք զքեզ ընդ ձօր և ընդ ձօրոյդ սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: **Ամէն, ամէն:**

Եւ լե զՊաւղոս որդեակ և եղբայր, որ և շնորհեաց տեղի ընդ հարկաւ տան իւրոյ առ ի զճաղրել և ի նկատել զաստուածային տառս՝ տացէ նմա **Տէր** ընդ յարկաւ իւրով տեղի անուանի փոխարէն սիրոյ նորա զոր խոստացաւ սիրողաց իւրոց, որ է աւերհնեալ յաւիտեան: »

Յիշատակարանքս այսոքիկ զրեալ էր յաւետարանի միում, որ է աստ ի Ալլկաթայ ի տան հանդուցեալ **Յովհաննէս Եվղալ** անուանի վարժապետի **Մարդասիրական ձեմարանի** ձայոց, սոյն հանդուցեալ վարժապետն զաստուածայիարանութեան կացեալ է ի յիշեալ ձեմարանի յամին **1826** և փոխեալ է առ **Աստուած յամին 1870**, որոյ զերեզման կայ ի բակի **Նազարէթայ** սուրբ **Եկեղեցւոյս**

կից արեւելեան արտաքին որմոյ բակին ձերմակ մարմարիննիւ. քաջ հայկարան զրտեալ է և ունի համբաւ մեծ ի Հնդկիս. այժմեան պարոնայք Ապկիթայու աշակերտ են սորին Ավգալի: Ունի ձոխ մատենադարան ի տանն բաւական զրենեօք, որոյ նման չգտանի առ այլում ի Հնդկիս. ի մահուն պատուէր աւանդեալ է որդւոց իւրոց չցրուել զմատենադարանն, որպէս և առ յարզի ունին զայն այժմ: Օչորս որդիս և զերկուս զստերս ունի: Մեծ որդին Յովհաննէս անուն՝ է օրինաւոր պարոն, զբաղի վաճառականութեամբ, ի հանդիսաւոր աւուրս զպրութիւն և սառնէ. անց է հասակաւն քան զքառասուն ամենիւք. ունի և զրասիրութիւն: Հանդուցեալ Ավտալն կայեալ է համապատասխանութիւն և ընդ Աննեակոյ Մխիթարեանս որպէս սովորութիւն է զբաղիտաց և այլոց տեղեաց. զբաղիր մատենայք յոյժ նուազ է ի մատենաս իւր: Օսոյն աւետարան գնեալ է նա հարիւր ուրբում յամին 1834՝ որպէս պատմեցին որդիք նորին, և ի յարզի ունէր. քանզի չգտանին աստ հին զբաղիբք աւելի, զի և ի խոնաւօղոյ երկրին չպահի զիբք անարատ ընդ երկար. այլ ինքն կարի խնամով պահեալ է զիւր մատենաս: Յանցելումն ամի հանդիպեալ այցելութեամբ ի տուն հանգուցելոյն, ցուցին որդիքն զմատենադարանն, և ի յոյզ և ի խնդիր լինելն մեր ձեռազրաց՝ տեսեալ զայն աւետարան՝ խնդրեցի ի նոցանէ նուիրել վասն մատենադարանի Մայր Աթոռոյս, զի մի՛ անդէն մնացեալ կացցէ անձանօթ. յայտնեցին զի կարի սիրելի է ինքեանց պահել յիւրեանս, քանզի և Աերոսն վարդապետ նպաստահաւաքն Ս.

Արուսաղէմի յամին 1869 ևկեալ ի Ատլկաթա, խնդրեալ էր վասն Արուսաղէմի և ջին տուեալ. զիարդ և է հաճեցուցի պահել յիւրեանս մինչև ցվերադարձ իմ, և յայնժամ նուիրեսցեն մատենադարանի սուրբ Էջմիածնի:

Ի 1 էջն օրինակեալ եմ յիշատակարան ինչ՝ որ է յսկիզբն աւետարանիս զբրեալ անարհեստ զբաւ ի յետին ժամանակս:

Յերկրորդ էջն սկսեալ «Աւետարան ըստ Յովհաննու, զլուսք ՄԱԲ» քառիւք՝ յորոյ սկիզբն* (աստղանիշ) եղեալ եմ, զբեալ է ի վերջ Յօհաննու աւետարանին յետ անմիջապէս պատմութեան կնոջն պոռնկին՝ կարճ հայցուածով «ով Տէր Յիսուս» և այլն: Ատանաւոր մի սկսանի յետ նորա անմիջապէս «չնորհաք արարչին» և այլն սկսուածով, որ որպէս տեսանի՝ զլուսք տանցն կապեն զայս բան «Շմաւոնի է աւետարանս այս»՝ որ է զբիշ աւետարանին: Յետոտանաւորին սկսանի անմիջապէս բուն յիշատակարան զբիշն յերորդ էջէն մինչև ցվերջին էջ զբութեանս, և աւարտի աւետարանս: Ի հինգերորդ էջն (*) աստղանշանաւ ծանօթութիւն զբեալ եմ, ի բուն յիշատակարանն չկայ փակագիծ, միայն զբիշն Շմաւոն՝ թողեալ է տեղի, որ յետոյ Մատթէոս անուն քահանայ մի զբեալ է անարհեստ զբաւ:

Ի աւական գեղեցիկ և մաքուր զբեալ է ի վերայ մագաղաթի ծաղկազրովք և յիւրաքանչիւր զլուսս ծաղիկք շինեալ է. զբութիւն աւետարանիս ի չափ Աբարատ ամաթերթի է ըստ լայնութեան, և միով մատիւ պակաս յերկայնութիւն մագաղաթն միջակ է հաստութեամբ

Թէև մատենադարան Մայր Աթոռոյս ունի զբազում աւետարանս և զանազան յիշատակարան պատմականք, օսկայն և աւետարանս այս՝ որ զրեալ է ի ՉԽՆ թվին Հայոց ի Հայրապետութեան Ստեփաննոսի և ի Թազաւորութեան Արիկեցւոց Հեթմոյ որդւոյ Աւոնի, և յիշխանութեան մեծ սպարապետացն Պապաքի և Խաչոյ որդւոյ և Թոռին մեծին Պոռչայ՝ ժառանգացն ցեղին Խախբականց, մերձ է վեց հարիւր ամաց հնութեան. մանաւանդ տեսեալ ի նմին զանուանս Պոռչ և Պապաք, յուշ ածեալ իմ՝ զի արծաթեայ աման սուրբ և Եստուածամուկ Պեղարզեան Քրիստոսի որ ի Մայր Աթոռոս, յիշատակ զոլ կարծեմ Պոռչ իշխանի. և այլ անցք պատմականք որ յայս յիշատակարան, յորում ժամանակի պատահեալ ցուցանի և զրաւումն զղեկին Հռոմկլայու յԱզգիպտացւոց Թազաւորէն, զարթուցին ի մեզ իզձս օրինակելոյ և առաքելոյ կանխաւ առ Չեզ, որ որպէս սովոր էք հրատարակել յԱրարատ ամսաթերթի զայսպիսի հնութիւնս, զուցէ և զայս հրատարակեսցէք ի ծանօթութիւն հասիրաց և ի քաջակերութիւն նուիրողի աւետարանիս մեծապատիւ Պարոն Յովհաննէսի որդւոյ հանգուցեալ Յովհաննէս Ավտալ վարժապետի, ևս և յօրինակ այլոց ազգասիրաց առ ի նուիրել զայնպիսի հնութիւնս մատենադարանի Մայր Աթոռոյս. յորում անկորուստ մնան յիշատակք զարուց ի զարս:

Ի վերայ սպիտակ մարմարիոնեայ տապանաքարի հանգուցեալ Յովհաննէս Ավտալեանց զխնական վարժապետի զրեալ

է տապանազիր, զոր օրինակեալ է իմ ի բուն տապանաքարէ նորին, որ է օրինակ զայս:

Հանդիստ
 Ի տապանիս այսիկ
 անիոսի մարմին գիտնական Պարոն
 Յովհաննու Ավղալեանց
 բաղմամեայ վարժապետի Հայկեան
 Մարդասիրական Ծեմարանի,
 Որ վախճանեցաւ ի Կալկամայ յամի
 1870 Չուլայի 11 ի հասակի
 67 ամաց, 8 ամոց եւ 7 անուրց:

Չայր այսպիսի՝ որպիսի է Յովհաննէս Ավղալեանց վարժապետն՝ որ կէս զարուշափ վարժապետութիւն արարեալ է, չէ՛ արժան անյիշատակ թողուլ, և որպէս մեք յօժարութեամբ զրեցաք, յուսամք զի և հրատարակէ յԱրարատն՝ երբ և պատշաճ համարեսցի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ Տ Ա Կ

Գ Ր Թ Ա Կ Ա Ն .

Այլ է եղանակ ուսանելոյ, և այլ՝ եղանակ ուսուցանելոյ, վասն զի և նպատակք և օժանդակք երկոցունց են այլ և այլ, և այս՝ այնքան քաջայայտ է, զի չարժէ ինչ սորա աղազաւ երկար խօսիլն և մտածիլն անգամ: Ակն յանդիման կերեւի՝ որ բազում ուսեալք կղտնուին, որ չեն տեսնազրեալ և հասու՝ ուսուցանելոյ եղանակին, վասն որոյ և նոցա աշխատութիւնքն բազում ուրիք, կամ լաւ ևս՝